

ների պատրաստման աշխատանքի արտադրողականությունը՝ 35—40% -ով:

2. Վերացվեց խառնուրդները կալչումից պահպանող գործադրային միջադիրների կիրառությունը:

3. Կալանդրի արագությունը՝ 24-ից մինչև 28—30 մ/րոպե ավելացնելու հաշվին կորդային կալանդրի արտադրողականությունը բարձրացել է 25% -ով:

4. Խոնավության բացակայությունը վերացրել է ոնտինի ծակոտկենությունը:

5. Կրճատվել է լրացուցիչ վուկանացվող ռետինի քանակը:

6. Ոնտինների տաքացման տեղամասում էլեկտրաէներգիայի ծախսը կրճատվել է 50% -ով:

7. Ազատվել են 19 բանվոր, որոնք զբաղված էին ոնտինների փոխադրմամբ և տաքացմամբ:

8. Վերացվել է ոնտինների հովացումը ջրով, որի հաշվին կրճատվել է ցեխում արդյունաբերական ջրի ծախսը 50% -ով:

Ողջիղ հոսքերի արմատավորումը գործարանին տվել է ավելի քան 500 հազար ոռուլու տարեկան տնտեսում:

ԱՆՏԱՌԱՆՑՈՒԹԻՄ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

Զ. ՀԱԽՆԱՋԱՐՅԱՆ

Ինժեներ

Հայկական ՍՍՌ անտառարդտնտեսություններում արմատավորվում է անտառանյութի մթերման նոր տեխնոլոգիա: Օգտագործելով Անդրկարպատյան անտառանյութ մթերողների փորձը, անտառարդտնտեսություններում կազմակերպվել են ստորին պահեստներ, որոնք ունեն անտառանյութի սղոցման և փայտամշակման ցեխեր:

Անտառանյութի մթերման մինչև վերջին ժամանակները գոյցություն ունեցող տեխնոլոգիայի համաձայն, կտրվելիք անտառամատում ծառահատումից հետո կատարվում էր միաժամանակ անտառանյութի բոլոր տեսակների մթերումը, իսկ պատրաստված, մշակման համար պիտանի բնափայտը և վառելափայտը փոխադրվում էին վերջնական կետերը: Կտրվելիք անտառամատում հաճախ թողնվում էին ծառաբնի ստորին մասերը, իսկստ ոստաշատությունը դժվարացնում էր նրանց մշակումը և դրա հետևանքով նրանք լիովին չեին օգտագործվում:

Հստ անտառանյութի մթերումների նոր տեխնոլոգիայի, որը լիովին իրավործվել է առաջմերկու անտառարդտնտեսություններում (Իջևանի և Սևքարի), կտրվելիք անտառամատում պատրաստվում են մշակման համար պիտանի տեսակները և վառելափայտը միայն ծառի գագաթի ոստությունը: Մշակման համար պիտանի տեսակ-

ները կազմում են մոտավորապես 45%, իսկ վառելափայտը՝ 15%: Մասաց 40% վառելափայտի տեսակներն են՝ երկայնական փայտերի, հնծանի կտորների, փոքր չորագծի կլոր գերանների ձևով, որոնք շեն համապատասխանում մշակման համար պիտանի անտառանյութի ԴՈՒՏ-ի պահանջներին:

Անտառանյութի փոխադրության ճանապարհների շրջարածների փոքր շառավիղները թույլ շեն տալիս ստորին պահեստները փոխադրել ծառուկի գագաթները կամ 5 մետրից ավելի երկայնական փայտերը: Այդ հանգամանքը ստիպում է ստորին պահեստներում ռացիոնալ մշակման մոլոխարեն (բարձր տեսակների սղոցափայտերի մեծ ելունքով) կատարել կտրվելիք անտառամատում անտառանյութի ոչ էֆեկտիվ մշակումը:

Ստորին պահեստի տերիտորիայում տեղադրվում է Անդրկարպատյան անտառային արդյունավետության Ավալյալվայի անտառարդտնտեսության կոնսուլտունկայի կիսանների սղոցման հաստոց, որով գերանի կիսանները սղոցվում են չորսվակների ձևով, 30 սմ-ից մինչև 1 մ երկարությամբ և մինչև 28—30 սմ տրամագծով: Նրանետ զուգորդված աշխատում են երկու շրջանաձև հաստոցներ՝ մեկը չորսումների երկայնական սղոցման միջոցով՝ անհամար հաստությամբ

տախտակներ ստանալու, մյուսը՝ ստացված տախտակների ճակատատաշման միջոցով անհրաժեշտ չափերի դետալներ պատրաստելու համար (տակառատախտակ, գոտի, տարայի ձողեր և այլն): Փայտանյութից ստացվում են 22—28% այդպիսի դետալներ:

Դետալների կլունքի այդ տոկոսը կարող է ավելացվել արմատավորվող տեխնոլոգիայի հետագա կատարելագործման և սպասարկող անձնակազմի որակավորման՝ բարձրացման դեպքում։ Անդուրկարպատյան անտառային արդյունաբերության նորմաների համաձայն, փայտանյութից պատրաստվող դետալների արտադրությունը սահմանվել է 33%։

Կիսամների սղոցման հաստոցի գծին զուգա-
հեռ տեղադրվում է կոճափայտ կտրող հաստոց
(կամ սղոցաշղանակ), որը զուգործված է ճոճա-
նակավոր և շրջանաձև հաստոցների հետ։ Կոճա-
փայտ կտրող հաստոցով սղոցվում են 1 մ
և ավելի երկարությամբ փայտե կոճղեր՝ չորսու-
ներ և տախտակներ սուանալու համար։ Այնու-
հետև սղոցափայտը բաց է թողնվում ճոճանա-
կավոր և շրջանաձև հաստոցներով՝ երկայնական
և ճակատային սղոցման համար։ Վերջնական
արտադրանքն է գոտին, տակառատախտակը և
այլն։ Հաշվի առնելով փտածությունը, փշակ-
երը, մեծ ծովածությունը և մյուս արատները,
սղոցափայտի ելունքն այդ դեպքում տատան-
լում է 45—50%-ի սահմաններում՝ պայմանա-

գրային անտառանյութի սղոցման ժամանակ ըստացվող 58%-ի փոխարեն:

Նկարագրված տեխնոլոգիայի համաձայն, անտառանյութի մշակումը հնարավորություն է տալիս կտրվելիք անտառամասի ֆոնդից զգալիորեն ավելացնել մշակման համար պիտանի փայտանյութի եղումքը: Այս գծերով բաց թողնվող փայտանյութի մեկ խորանարդ մետրը, նրանից ստացվող դետալների ներմագի համաձայն, հավասարեցվում է պայմանագրային սղոցանյութի 0,8 մ³,

Տնտեսումը, որ ստացվում է միայն 1 մ³
անտառանյութի արժմատի արժեքում, հավասար է
25—28 ռուբլի (մշակման համար պիտանի ան-
տառանյութի 1 մ³ արժեք 44 ռուբլի, իսկ վա-
ռելափայտինը՝ 7 ռուբլի):

1958 թվականի առաջադրանքի համաձայն, Հայաստանի անտառարդտնտեսությունները պետք է վերամշակեն 15 հազ. մ³ փայտանյութ։ Դա միայն նրա արմատի արժեքի վճարման դեպքում կտա 395 հազ. ռուբլի գումարով տնտեսում։ Հետագա տարիներին փայտանյութի վերամշակումը կհասնի կտրվելիք անտառամասից ստացվող ֆոնդի 40%-ին։

Հաշվի առնելով, որ 1960 թվականից անտառանյութի տարեկան բացթողումը պակասելու է 90 հազ. մ³-ով, անտառային ֆոնդի ուսցիունալ օգտագործման հարցը ձեռք է բերում հատկապես ակտուալ նյանակություն: